

Տ Ա Ճ Կ Ա Ն Ա Յ Ք

Եկեղեցական կայուածները.—Յայտնի է թէ եկեղեցիներու կայուածներէն մէկ մասը Եվգաֆի կողմէ գրաւուած էին հին Բէթլամի օրով, երբ նոր կայուածահամարի ձեռնարկած էր և եկեղեցական կայուածներուն ալ կայուածագիրներուն մէջ նշանակուած էր անունը անգոյ մարդոց, որոնք պատկանեալ եկեղեցիներուն անունովը կ'յորջոջուէին: Այսպէս գրաւուած էին նաև Թօփղարուի եկեղեցիին կայուածները և հակառակ դիմումներու կարելի չէր եղած ետ առնել: Այս խնդրին առթիւ հետեւեալը կը կարգանք «Նուրայի Իւմմէթ» ի մէջ. «Թօփղարուի կողմը, Պայազիտ աղա մահալլէտի, վեց խանութի և երկու տունի համար լուր տրուած էր մահլիւլաթի վարչութեան թէ մահլիւլ մնացած էին: Արձանագրութեան դիմուելով, տեսնուեցաւ թէ այդ կայուածները արձանագրուած էին մոմավաճառ Նիկողոս անուն մէկու մը վրայ որ առանց ժառանգորդի մեռած էր, որով լուր տրուեցաւ վարձակալներուն թէ վարձքերը ու և է մէկու մը չյանձնեն: Ասոր վրայ Եվգաֆի նախարարութեան դիմում եղաւ թէ ատանք Թօփղարուի Ս. Նիկողոս եկեղեցիին կը պատկանին: Նախարարութիւնէ հարցուց թէ կայուածները ի՞նչպէս փոխանցուած են եկեղեցիին: Պատասխանուեցաւ թէ եկեղեցիին պաշտօնեաներէն մոմավաճառ Նիկողոս անուն մէկուն կողմէ թողուած են և ցոյց տրուեցաւ նուֆուզ Թէզքէրէտի մը Ասիմի որդի Նիկողոսի անունով, որուն ծննդեան թուականն է 1265 թուականը, ծնած Պօլսոյ մէջ և թեզքերն առնուածէ 1300 Յուլիս 13-ին: Բայց տամարներուն մէջ ատանկ անունով արձանագրութիւն մը չկար: Այսպէս, այս գործին մէջ խարդախութիւն մը գտնուելը երևան ելլելով, գործը յանձնուեցաւ Եվգաֆի իրաւագէտ խորհրդականութեան»:

Արդ է թէ գործը խարդախութիւն մը չէ. առիկա սովորութիւն մըն էր հինէն ի վեր ընդունուած եկեղեցական կայուածները պահպանելու համար: Ապագայ ամէն տեսակ դժուարութեանց առաջըը առնելու համար, հարկ է այժմէն-կարգազրբութիւն մը ընել այդ կայուածներուն մասին: Պատրիարքաբանը անմիջապէս պէտք է տեղեկացնէ Եվգաֆի թէ Թօփղարուի այդ կայուածները հայ եկեղեցիին կը պատկանին և թէ խարդախութիւն չկայ այդ կայուածներուն՝ մոմավաճառ անգոյ Նիկողոսի մը անուան արձանագրուելուն մէջ:

Թօփղափուի ազգային գրաւեայ կայուածները. — Օսմ. երես֊
փոխան Զօհրայ էֆէնտի երէկ տեսակցութիւն մը ունեցաւ այդ
կալուածներուն մասին Էփղաֆի նախարարին հետ, որ յայտա֊
բարեց թէ ինքն այդ տեսակ դրաւումէ մը տեղեկութիւն չունի:
Նախարարը Զօհրայ էֆ. -ի դիտողութեան վրայ յայտարարեց
թէ Էփղաֆի մէջ այս միջոցիս նոր օրէնք մը կը պատրաստուի,
որով պիտի ճշդունին կալուածներուն սեփականութեան տիա֊
դոսները ուղղակի չայ Ազգին անուան վրայ:

**Վանի մէջ տիկիններու և օրիորդներու նախաձեռնու֊
թեամբ «Որբախնամ» ընկերութիւն մը կազմուած է օգնութիւն
հասցնելու տեղւոյն բազմաթիւ անտէր ու անօգնական թշուառ
որբուկներուն: Նկատելի է որ Վանի մէջ դրէթէ կանացի զգու֊
շաւորական դրութիւն կը տիրէ, որպէս արդիւնք թիւրք բռնա֊
պետական բէթիմին: Արդ, իգական սեռին կողմէն Վանի մէջ
այդ տեսակ ձեռնարկ մը խիստ մէծ քաջալերութեան արժանի է:**

Շայ բողոքականներ և ազգ Պատրիարքարանը. — Մեզ լուր
կուտան թէ Շայ բողոքականներուն մէջ կուսակցութիւն մը
կայ որ կուղէ ազգ. Պատրիարքարանի իրաւասութեան տակ
մտնել և չունենալ անջատ վարչութիւն մը, քանի որ եղբայ֊
րակցութեան դադարիարը այդ կը պահանջէ: Այս դադարիարին
ջատագոյներէն է եղեր Վեր. Մը. Ալէն, իսկ հակառակողները՝
Տօքթ. Պարնըմ և Կրին:

Նամակ Զէյթուրիւնից 13 նոյեմբ. 1903. Տեղւոյս Կեդր. նա֊
խակրթարանը երկու ամիսէ ի վեր բացուած է և կը շարու֊
նակէ կանոնաւորապէս, հոն կը յաճախեն այժմ 100-120 աշա֊
կերտներ, իսկ աղջկանց վարժարանի սանուհիներուն թիւը
հասած է 70-80: Ուսումն. Խորհուրդը կարելին ի գործ դրած
է, Կեդրոնականի բացման ու յառաջդիմութեան համար, հրա֊
ւերելով 5 ուսուցիչ և երկու վարժուհի, նորէն վարելու համար
իրենց նախկին պաշտօնը, զոր աւելի նախընտրած էին, Մա֊
բաշէն ու Հաճընէն եղած հրաւերները անձնանուիրաբար և վեհ
գլխացումով մը մերժելով ուսուցիչներէն երկուքը և ուսուցչուհին:

Նախորդ Պատրիարքը հետզհետէ կը արատեց դպրոցին
նպաստը, իսկ այսօր խսպառ զրկուած, անձնուէր ուսուցիչ֊
դաստիարակներ կը յաճախեն դպրոց իրենց վարձքը իրենց պար֊
տականութեան ճշմարիտ կատարման մէջ տնոնելով: Սակայն
միայն անոնց անձնուիրութիւնը չի կրնար հասցնել ուսումնա֊
տէր աշակերտները բաղձացուած կէտի մը: Երբ գրքերու և մա֊
նաւանդ դասադրքերու չգոյութիւնը յուսահատութեան է
մատնեը ուսուցչական մարմինը: Ըին բռնաւորական ազատա

օրերուն իսկ այս աստիճան չէր ներդրած Ձեթուն՝ գրքերու շրջալուծեան պատճառաւ։ Միացեալ Ընկերութիւնը կը հոգարէ

Ձեթունի գալուցը բարձրացնելու ջանք մը պէտք է ընել և այդ «որ իւր» բայց եթէ գրքով, որոնց կարօտը քաշած է ցարդ տեղւոյն նախակրթարանի շրջանաւարտը, լինենազարգացման փափաքելով, յուսալի է որ նորակազմ շրջանաւարտաց միութեան Մատենադարանը պիտի կրնայ ընուլ այդ պահասը։ Ձեթուն իր նիւթահանէն աւելի բարոյական-գալուցական կեանքին բարձրացման պէտք ունի, այն, անհրաժեշտ է այս պահասը ընուլ։ Այս ազատութեան դարուն՝ ամենէն աւելի մենք պէտք և իրաւունք ունինք վայելելու լոյսը, յառաջդիմութիւնն ազատութեան ոգին. այժմ, շնտ սուղի նստաւ մեզ՝ թանկագին արիւնով գնուած այս ազատութիւնը։ Արեւմտի կը խորհինք թէ ինչու կանտեսուին տեղւոյն կրթական մակարդակը բարձրացնելու անհրաժեշտ պէտքը։ Թէպէտ կը հաւատանք որ երկաթէ Պարիսընիս և վերակազմելի Միացեալ Ընկերութիւնը ձեռք ձեռքի տուած գուրգուրանքով պիտի հսկեն Կիլիկիոյ թշուառութեան անապատին մէջ յուսոյ ովասիս եզոզ և անգութ բախտէն միշտ հալածուած Ձեթունի, սակայն նուիրական պարտք կը համարինք յանձնել այս կենսական խնդիրը համայն հայ խորհող դասակարգին լուրջ ուշադրութեան։ 13 երկար տարիներէ ի վեր տարագիր, Նազուպեան թաղէն ալեզարդ ճերունին Մնացական էֆ. Սէմէրճեանը վերադարձած է իր հայրենի երգիքին տակ և սիրալիւր ընդունելութեամբ մը պատուած քաղաքիս երևելիներէն. յիշեալ պատուական անձէն ուրախութեամբ կիմանանք թէ՛ Աղեքսանդրիոյ ազգանուէր հայութիւնը փափաքած է Ձեթունի հերոսական կեանքը վարձատրելու ազնիւ զիմումով՝ գրական ծաղիկներու փունջով մը պսակել հին օրերու մէջ յաճախ արիւնաներկ ճակատը Ձեթունի. Աղեքսանդրիոյ ընթերցատուն-Մատենադարանին հսկող մարմինը ուխտեր է Ձեթունի Նըջանաւարտաց Միութեան Մատենադարանին նուիրել սոյն բոլոր գրքերը, զորս կը տրամադրութեան տակ ունի։ Ի դիմաց տեղւոյն նոր սերունդին և մանաւանդ մեր նորակազմ Միութեան, կը փութամ յայտնել շնորհակալութիւններս յիշեալ ազգանուէր հաստատութեան հայրենասէր մարմնոյն, և համայն Հայութեան Աղեքսանդրիոյ։ Իցեւ թէ կարգ մը կրթատէր ունեւորներ և ժողովրդեան օգտին համար աշխատող գրատուններ ի սէր Ձեթունի նոր սերնդի զարգացման, բարեհաճէին հետևիլ այս ազգանուէր մարմնոյն վսեմ օրինակին։

ԽԱՉԻԿ ԵԱՂՈՒՊԵԱՆ

Եգիպտոսի Հայերը և Հայաստանի կարօտեալները. Պօղոս բաշա Նուբար, խորապէս զգացուած այն սրտածմբիկ տեղեկութիւններէն զոր Եւրոպայէն հազիւ վերադարձած լսած է Հայաստանի կարօտեալներու ամենախեղճ վիճակին վրայ, որոշած է Եգիպտոսի մէջ մեծ հանգանակութեան մը ձեռնարկել՝ մեր թշուառ եղբայրներուն անմիջական օգնութիւն հասցնելու համար: Ն. Վսեմութիւնը, իբրև Նախագահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, իր հովանաւորութեան տակ առած է հանգանակիչ Յանձնախումբը: Յանձնախումբը ընդհանուր կոչ մը պիտի ընէ Եգիպտոսի մարդասէրներուն՝ բացատրելով ճին բէժիմէն հարստահարուած և յետին թշուառութեան մասնուած հայերու ամենախեղճ վիճակը: Հանգանակութիւնը պիտի կատարուի՝ Հ. Բ. Ը. Միութեան նախաձեռնութեամբ, և Պօղոս փաշա Նուպարի հովանաւորութեամբ: Պօղոս փաշա 500 սոկի արձանագրուեցաւ:

— Անատօլուի Երկաթուղիի Հայ Պաշտօնէից Միութեան կողմէ պատգամաւորութիւն մը Ս. Պատրիարք Հօր ներկայանալով երեկ, Նոր Տարին շնորհաւորելէ ետքը, Զէյթունի կարօտելոց համար տասն հազար զրուշի դոլար մը յանձնեց, որով 14,000 զրուշի կյանդի նոյն Միութեան ղօվելի նպատակով ըրած նպատար: Ն. Ամենապատուութիւնը շնորհակալութիւն յայտնելով, օրհնեց Միութիւնը, և իր հայրական ողջոյնը զրկեց անոր ամեն անդամներուն:

Երուսաղէմի գօրծեռ. Վարչութիւնը նկատողութեան առնելով Երուսաղէմի հասած մէկ քանի հեռադիրներ, որոնցմով Երէցեան Եպիսկ. և Ղևոնդ Վ. Վանը կհրաւիրուին, որոշեց որ յետաձգուի այդ մասին պէտք եղած որոշումը մինչև որ Ազգ. Ժողովոյ որոշած հաշուական քննութիւնը տեղի ունենայ: Այդ Գննիչ Յանձնաժողովոյ անդամներէն Ոսկան էֆ. Մարտիկեան ալ իր պաշտօնը ստանձնած ըլլալով, այսօր առաջին դումարումը տեղի պիտի ունենայ, հետևաբար Ս. Պատրիարքը յանձնարարեց զիւանին, որ Երուսաղէմի խնդրոյն վերաբերեալ ըստ թութեւրը զիւանին մէջ ամփոփուելով յանձնուին նոր Յանձնաժողովին:

Կիլիկիայ Կարողիկոսին Խնդիրը. Կիլիկիոյ հանդուցեալ Մկրտիչ Կաթողիկոսը Հալէպի Օսմ. Պանքային մէջ 500 սոկիի դումար մը ունէր զոր ստացան Ժառանգորդները, հակառակ Պատրիարքարանի առարկութիւններուն, որոնք անխելի մնացին անցեալ ընտպետութեան շրջանին մէջ: Այս մասին Պատրիարքարանի կողմէ կարդեալ փաստաբանը դատաւարութիւն ալ

ըրաւ, սահայն ո՛ր և է ելը չունեցաւ գործը: Ժառանգորդներն այս արդիւնքէն քաջալերուելով, այս անգամ ալ ծախու հաներ են հանդուրեցեալ Կաթողիկոսին Մարաշի մէջ ունեցած մէկ քառորդ խանը, որ 500 սակի կարժէ, այգիներն որ 300 սակի կարժեն և ուրիշ մէկ քանի կալուածներ, ընդամէնն 1000 սակէն աւելի արժող, զորս գրաւելու փորձ ըրած են. տեղւոյն ղրոյ եղած դատավարութենէն յետոյ այդ անգամ դատական փճուով ժառանգորդաց փոխանցուելու որոշում արուած է: Կիլիկիոյ Կաթողիկոսն այս որոշումն հեռադրաւ հաղորդած ըլլալով Ս. Պատրիարքին, Ն. Ամենապատուութիւնն խնդրոյն դատական նախարար Ռէֆիզ պէյի հաղորդեց զայն, խնդրելով որ այս որոշման գործադրութիւնն յետաձգուի, որովհետեւ հանդուրեցեալ Կաթողիկոսը «նէֆը միւր»ի հէօճէթ ունի, և այդ պատճառաւ ժառանգորդներուն իւրացնելու փորձն անտեղի է: Գատական նախարարն անմիջապէս հեռադրը ուղղեց Մարաշի դատական պաշտօնէութեանը, մինչև որ օրինական միջոցով քննութիւն տեղի ունենայ:

Ինչ կանցնի կիլիկիոյ մէջ. Կիլիկիոյ Ս. Կաթողիկոս Վիճակայիններուն իրեն նկատմամբ ցոյց տուած անտարբերութենէն զդացուած, հրաժարելու դիտարութիւն յայտներ է:—Մեր մասին, գիտենք որ Տ. Սահակ Կաթողիկոսին այլ և այլ արարքը կամ հանգամանքը դիտողութեան առարկայ եղած են Կիլիկիոյ մէջ. բայց չենք կարծեր որ իրերը մինչև հոն յանգած ըլլան որ յուսահատած և հրաժարելու արամադրութիւն յայտնած ըլլայ: Տ. Սահակ Կաթողիկոս Քննադատուեցաւ Երուսաղէմէն իրեն հետ Կիլիկիա տարած Տ. Կարապետ Վրդ. ի նման անարժանի մը այնքան երես տալուն և երկարատեն Այնթապ—Հալէպի առաջնորդական պաշտօնին վրայ պահելուն համար: Քննադատուեցաւ ընաւ գործունէութիւն չցուցնելուն համար: Մինչև իսկ ըսուեցաւ որ առանց Առանայի՞ Առաջնորդ Տ. Մուշեղ եպոս. ի աջակցութեան, այսչափ ալ պիտի չլինար գործ տեսնել: Բայց շնորհիւ Ազատութեան հռչակման, Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին ալ ասպարէզ բացուած է գործելու, և ուտուգիւ տկարութեան և ապիկարութեան նշան մը պիտի ըլլար, գործելու ժամն հնչելուն պէս ձեռնթափ ըլլալ, յուսալով Երուսաղէմի Պատրիարքութիւնը ձեռք ձգել:—Մեր թղթակիցը կոյարէ թէ Կիլիկիոյ ըուրթ թեմերէն պատգամաւորական կամ երեսփոխանական ընդհանուր ժողովի մը գումարման պէտքը կը շեշտուի, Կիլիկիոյ հանրային պէտքերուն վրայ խորհրդակցելու համար: Այսուսանք որ Տ. Սահակ Ս. Կաթողիկոս գոհացում կուտայ այս սահմանադրական օրինաւոր բարձանքներուն: